ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
"ASSESSMENT AND TESTING CENTER"
STATE NON TRADE ORGANIZATION

ՀՀ, ք. Երևան, 0025,Չայլախյան 4
Հեռ. 010 57 63 37,
E-mail: info@atc.am

Chaylakhyan str. 4,Yerevan, 0025, RA
Tel. +374 10 57 63 37,
E-mail: info@atc.am

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի «Ուսուցիչների կամավոր ատեստավորման, կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի և դրան հատկացվող հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձևավորման կարգը հաստատելու մասին» թիվ 596-Ն որոշման հավելվածի 64-րդ, 67-րդ կետերը, Գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի 2024թ. նոյեմբերի 28-ի թիվ 239-Ա հրամանը՝ 2024թ. նոյեմբերի 23-ին կազմակերպված «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Նախնական զինվորական պատրաստություն», «Տեխնոլոգիա», «Երաժշտություն», «Կերպարվեստ» և նոյեմբերի 24-ին կամակերպված «Պատմություն», «Հայ եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն», «Տարրական ուսուցման մեթոդիկա» առարկաների ուսուցիչների կամավոր ատեստավորման առարկայական բողոքարկման հանձնաժողովների կազմը հաստատելու մասին բացառությամբ /բացառությամբ «Ֆիզիկա» առարկայի, որից ատեստավորման արդյունքների բովանդակային բողոքարկում չի եղել և հետևաբար բողոքարկման հանձնաժողով չի ձևավորվել/՝ բողոքարկման հանձնաժողովների կողմից նիստեր են հրավիրվել 2024թ. դեկտեմբերի 2-ին, դեկտեմբերի 3-ին, դեկտեմբերի 5-ին, դեկտեմբերի 6-ին, և ընդունվել են հետևյալ որոշումները .

1. «Քիմիա» առարկայի առաջադրանքների բողոքարկման արդյունքում ուսումնասիրվել են բողոքարկումները, ատեստավորվողների միավորները պահպանվում են:
2. «Հայ եկեղեցու պատմություն» առարկայի առաջադրանքների բողոքարկման արդյունքում ուսումնասիրվել են բողոքարկումները, ատեստավորվողների միավորները պահպանվում են:
3. «Երաժշտություն» առարկայի առաջադրանքների բողոքարկումների արդյունքում միավորները պահպանվում են:
4. «Տեխնոլոգիա» առարկայի վերաբերյալ.

4.1. Միավոր տալ նաև այն ատեստավորվողներին, ովքեր «իզմիրի» փոխարեն նշել են «թործադուր».

«Ուղղանկյուն տեսքով ակոսների, բլթանցքների, բնիկների հարմարաբերումը կատարվում է՝

☐ Թործադուրով
☐ Իզմիրով
☐ Էլեկտրաթործիչներով
☐ Դանակով»:

4.2. Միավոր տալ նաև այն ատեստավորվողներին, ովքեր են ընտրել են 1-ին՝ «Վիտամինների քանակը կախված չէ բանջարեղենի կտրատման չափից» տարբերակը.

«Կերակրի մեջ ինչպե՞ս կարող է փոխվել վիտամինների քանակությունը՝ կախված բանջարեղենի կտրատման չափերից.

☐ Վիտամինների քանակը կախված չէ բանջարեղենի կտրատման չափից
☐ Որքան խոշոր է կտրատված բանջարեղենը, այնքան քիչ է վիտամինի կորուստը

☐ Որքան խոշոր է կտրատված բանջարեղենը, այնքան շատ է վիտամինի կորուստը

☐ Որքան մանր է կտրատված բանջարեղենը, այնքան քիչ է վիտամինի կորուստը»:

4.3. «Տեխնոլոգիա» առարկայի այլ առաջադրանքների բողոքարկումների արդյունքում միավորները պահպանվում են:

5. «Պատմություն» առարկայի վերաբերյալ.

4.1. հետևյալ առաջադրանքում ճիշտ է նաև 4251637 պատասխանը: Մեկ միավոր տալ այն մասնակիցներին, ովքեր 4257163 պատասխանի փոխարեն ընտրել են 4251637 պատասխանը.

«XX դարի առաջին կեսին տեղի ունեցած իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:

1) Ճապոնիայի դուրս գալը Ազգերի լիգայի կազմից:
2) Հանրապետության հռչակումը Թուրքիայում:
3) Ճապոնիայի միանալը Բեռլին-Հռոմ ռազմական միությանը:
4) Իրանի անկախության ճանաչումը անգլո-իրանական համաձայնագրով:
5) Ռեզա խանի հռչակումը Իրանի շահ:
6) Ջավահառլալ Ներուի ընտրվելը Հնդկական ազգային կոնգրեսի նախագահ:
Քաղաքացիական պատերազմի սկիզբը գոմինդանականների և կոմունիստների միջև: »:

4.2. «Պատմություն» առարկայի այլ առաջադրանքների բողոքարկումների արդյունքում միավորները պահպանվում են:

6. «Տարրական ուսուցման մեթոդիկա» առարկայի վերաբերյալ.

6.1. նշված առաջադրանքի 2-րդ հարցի պատասխանը 250 է, 250 նշած բոլոր ատեստավորվողներին տալ միավոր.

«Ապակի պատրաստելու համար անհրաժեշտ է 25 մաս ավազ, 9 մաս սոդա և 5 մաս կիր: *Պատասխանը գրել առանց չափման միավորների: (3 միավոր)*

Քանի՞ կգ սոդա է անհրաժեշտ 195 կգ ապակի պատրաստելու համար: /(195:39) գ9=45
Քանի՞ կգ ավազ է պետք 390 կգ ապակի պատրաստելու համար:
/(390:39) գ25=250
Քանի՞ կգ կիր կպահանջվի 1170 կգ ապակի պատարաստելու համար: /(1170:39)գ5=150»:

6.2. «Տարրական ուսուցման մեթոդիկա» առարկայի այլ առաջադրանքների բողոքարկումների արդյունքում միավորները պահպանվում են:

7. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի վերաբերյալ.

7.1. «Համապատասխանեցնել հայկական կամավորական ջոկատները դրանց մասնակցած ճակատամարտերին» առաջադրանքի ճիշտ պատասխաններ են նաև դ1 և գ4 տարբերակները, և միավոր տալ այն ատեստավորվողներին, ովքեր ա3, բ6, գ1, դ4, դ 1, գ 4 պատասխաններից ցանկացածն են ընտրել /յուրաքանչյուր ճիշտ պատասխանը՝ 1 միավոր, առավելագույնը՝ 4 միավոր՝ 4 ճիշտ պատասխանի համար/:

7.2. «Որ պնդումն է սխալ» առաջադրանքում հարցի ճիշտ պատասխան ընդունել նաև «երթային քայլը կիրառվում է բոլոր այն դեպքերում, երբ շարային քայլով շարժվելու հրաման չկա» պատասխանը: Այս պատասխանը ընտրած և միավոր չստացած ատեստավորվողներին տալ 1 միավոր:

7.3. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի այլ առաջադրանքների բողոքարկումների արդյունքում միավորները պահպանվում են:

7.4. Կատարել բոլոր ատեստավորվողների արդյունքների վերահաշվարկ՝ համաձայն «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուղեցույցում նշված գնահատման չափանիշների:

8. «Կերպարվեստ» առարկայի վերաբերյալ.

8.1. «Ո՞վ է «Տատիկի այգին» կտավի հեղինակը:» հարցը դուրս է «Կերպարվեստ» առարկայի ուղեցույցում նշված գրականության ցանկից: Միավոր տալ այս առաջադրանքից միավոր չստացած բոլոր ատեստավորվողներին:

8.2. «Վերածննդի ժամանակաշրջանի ո՞ր գեղանկարիչն է կահույքի վրա նկարազարդել:

1)Սանդրո Բոտիչելլի

2)Պաոլո Ուչչելլոն

3)ԴոմենիկոՎենեցիանոն

4) Ֆիլիպինո Լիպպին»:

Հարցը դուրս է «Կերպարվեստ» առարկայի ուղեցույցում նշված գրականության ցանկից: Միավոր տալ այս առաջադրանքից միավոր չստացած բոլոր ատեստավորվողներին:

8.3 «Հայաստանի ո՞ր թանգարանում են ցուցադրվել դեկորատիվ կիրառական արվեստի առավել մեծաքանակ (շուրջ երեք հազար ութ հարյուր) նմուշներ:» առաջադրանքում առկա է տեխնիկական սխալ՝ 3800՝ 38000-ի փոխարեն: Միավոր տալ այս առաջադրանքից միավոր չստացած բոլոր ատեստավորվողներին:

8.4. «Աշխարհում ամենահին տիկնիկը որտե՞ղ է հայտնաբերվել և ո՞ր թանգարանում է ցուցադրվել: » հարցը դուրս է «Կերպարվեստ» առարկայի ուղեցույցում նշված գրականության ցանկից: Միավոր տալ այս առաջադրանքից միավոր չստացած բոլոր ատեստավորվողներին:

8.5. «Կերպարվեստ» առարկայի այլ առաջադրանքների բողոքարկումների արդյունքում միավորները պահպանվում են:

9. «Կենսաբանություն» առարկայի վերաբերյալ.

9.1. հետևյալ առաջադրանքում խնդրի ճիշտ պատասխան է և՛ 15-ը, և՛ 2700-ը: 15 կամ 2700 նշած բոլոր ատեստավորվողներին տալ միավոր.

«Բակտերիայի բջջում սպիրտային խմորման ընթացում էներգիայի կորուստը կազմել է 2190 կՋոուլ:

Ընդունել, որ ԱԿՖ-ից ԱԵՖ-ի սինթեզի համար անհրաժեշտ է 32 կՋոուլ էներգիա:

Քանի՞ մոլ էթիլ սպիրտ է առաջացել այդ ընթացքում:

Որքա՞ն գլյուկոզ է ենթարկվել ճեղքման:»

9.2. «Կենսաբանություն» առարկայի այլ առաջադրանքների բողոքարկումների արդյունքում միավորները պահպանվում են:

10. «Հասարակագիտություն» առարկայի վերաբերյալ.

10.1 Հետևյալ առաջադրանքը առարկայի ուղեցույցում նշված գրականության ցանկից դուրս է: Միավոր տալ այս առաջադրանքից միավոր չստացած բոլոր ատեստավորվողներին.

« Պնդումներից ո՞րն է սխալ.

1. Փողը փոխանակման միջոց է

2. Տնտեսագիտության «հայրը» Ադամ Սմիթն է
3. ՀՆԱ-ն պետական ծախսերի հանրագումարն է
4. Պահանջարկը զնողունակ պահանջմունքն է»:

10.2. Հետևյալ առաջադրանքը առարկայի ուղեցույցում նշված գրականության ցանկից դուրս է: Միավոր տալ այս առաջադրանքից միավոր չստացած բոլոր ատեստավորվողներին.

«Գործազրկությունը, որը պայմանավորված է զիտատեխնիկական առաջընթացով՝ բնորոշ է.

1. Ֆրիկցիոն գործազրկությանը
2. Կառուցվածքային գործազրկությանը
3. Պարբերաշրջանային գործազրկությանը
4. Սեզոնային գործազրկությանը»:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ